ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. ապրիլի 17-ից 20-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
Արման Խոջոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝
Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ Կալիֆոռնիա նահանգ, 2023թ. ապրիլի 17-ից 20-ը

4. Հրավիրող կողմը՝
Ասիական զարգացման բանկ

5. Գործուղման նպատակը՝
Մասնակցություն Սթենֆորդի համալսարանում կազմակերպված «Բնության ինտեգրումը որոշումների կայացման համատեքստում» խորագրով աշխատաժողով-ուսուցմանը

6. Քննարկված թեմաները՝

- Բնական կապիտալի պաշտպանությանն ու աճին ուղղված քաղաքականության մշակման հմտություններ,
- Բնական կապիտալի առաջնահերթությունների, կենսաբազմազանության ռեսուրսների, էկոհամակարգերի, սոցիալ-տնտեսական շահերի, ճանապարհային քարտեզների, ֆինանսների ներգրավմանն առնչվող հարցերի քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝
Աշխատաժողովի ընթացքում մասնակիցները ձեռք բերեցին գործնական հմտություններ՝ ուղղված բնական կապիտալի նորարարական մոտեցումների զարգացման իրագործմանը՝ ուղղորդվելով յուրաքանչյուր երկրի և տարածաշրջանի

առաջնահերթություններով: Աշխատաժողովը համախումբ էր գիտաքաղաքական գործընթացները խթանելու հավակնոտ ջանքերի՝ նվիրված բնական կապիտալի առաջնահերթությունների, կենսաբազմազանության ռեսուրսների, էկոհամակարգերի, սոցիալ-տնտեսական շահերի, քաղաքականության մշակման ճանապարհային քարտեզների, ֆինանսների ներգրավման կարևորագույն հարցերի քննարկմանը: 12 երկրների քաղաքականության մշակման և տեխնիկական աջակցության հարցերով բարձրաստիճան փորձագետներ՝ մեկ հարկի տակ, համատեղ ջանքերով ծանոթացան, թե ինչպես են էկոհամակարգերը և մարդկանց բարեկեցությանն առնչվող հարցերը փոխկապակցված երկրների տեղական մարտահրավերների համատեքստին, ինչպիսի ֆինանսական մեխանիզմներ և քաղաքականության մշակման մեթոդներ են անհրաժեշտ կենսաբազմազանության և մարդկանց բարեկեցիկ կյանքի ապահովման համար: Մասնակիցները հնարավորություն ստացան բազմակողմ զարգացման բանկերի, Սթենֆորդի «Բնական կապիտալ» ծրագրի փորձագետների և միջազգային այլ կառույցների ներկայացուցիչների հետ փորձի փոխանակման արդյունքում ստանալ գործնական գիտելիքներ՝ ուղղված քաղաքականության և ներդրումների վերափոխմանը՝ բնական կապիտալի գնահատման և հաշվառման, գործառնական մոտեցումների ներդրման ճանապարհով:

Աշխատաժողովի ավարտին նախարարի տեղակալ Արման Խոջոյանի կողմից առաջարկվեց Հայաստանի Հանրապետությունում գերնորմատիվային հողերի և ջրային ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրները ուսումնասիրության առարկա դարձնել Սթենֆորդի համալսարանի փորձագետների և գիտնականների կողմից: Կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին առաջիկա 15 ամիսների ընթացքում շարունակել քննարկումներն ու աշխատանքները այդ ուղղությամբ՝ ակնկալելով հնարավոր երկարաժամկետ ծրագրի մշակում և իրականացում՝ ուղղված բնական կապիտալի/ռեսուրսների խնայողաբար օգտագործմանը և մակրոտնտեսական մոդելավորման միջոցով փոխկապակցել այն բնական ռեսուրսների պահպանմանն ուղղված ծրագրերին:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

25.04.2023